

6. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹⁶

Նախատեսված էր 2005թ. ընթացքում իրականացնել 8 վիճակագրական հետազոտություն: Ընդ որում, դրանցից 3-ը, կամ 37.5%-ը պետք է իրականացվեր ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ 5-ը՝ միջազգային ծրագրերի մասնագիտական ու ֆինանսական օժանդակությամբ (4-ը՝ ՏԱՄԻՍ ծրագրով, 1-ը՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ):

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին իրականացվել են հետևյալ 3 վիճակագրական հետազոտությունները՝

- «Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն»-ը,
- «Տնային տնտեսություններում աշխատուժի ընտրանքային հետազոտություն» (ԱԸՀ)-ը, առաջին կիսամյակում չի իրականացվել, քանի որ զբաղվածության վերաբերյալ հարցաշարի առանցքային հարցերը ներառվել են «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրության» հետազոտության մեջ, իսկ երկրորդ կիսամյակի հետազոտության դաշտային աշխատանքներն ավարտվել են, ընթացքի մեջ են հավաքագրված տվյալների տրամաբանական ստուգման-կողմնորոշման աշխատանքները:
- «Առևտրային փոքր կազմակերպություններում աշխատողների թվաքանակի և աշխատավարձի ընտրանքային հետազոտությունը»:

ՏԱՄԻՍ ծրագրով «2005թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրով» 2005-2006թթ նախատեսված 4 վիճակագրական հետազոտությունները կանցկացվեն 2006 թվականին:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսական և Macro International Inc. կազմակերպության տեխնիկական աջակցությամբ, ՀՀ առողջապահության նախարարության և ամերիկյան Macro International Inc. կազմակերպության սերտ համագործակցությամբ 2005թ. անց է կացվել Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հարցերի հետազոտություն:

¹⁶ Տես՝ Ծրագիր, Հավելված II: